

Հայոց լեզու

1. Ո՞ր շարքի բոլոր բառերն են երկվանյակ:

- 1) մկան, աստղիկ, հարսնյակ
- 2) սպի, էինք, երբևէ
- 3) վայրէջք, կռունկ, անարև
- 4) ծանր, հուսաբեկ, բժիշկ

2. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում ռ.

- 1) բարբա-, մատ-վակ, ոսկո-, ա-վույտ
- 2) ա-ժևորել, կ-ճիկ, կա-ուսել, հ-չակ
- 3) պա-կել, հու-թի, կարկա-ել, արբշի
- 4) սարսու-, ու-ճանալ, ու-կան, կե-ոն

3. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- 1) լայնախոհ - լայնահորիզոն, լախտ - մտրակ, գուղձ - հողակոշտ, մակույկ - նավակ
- 2) թեզանիք - թեք, քողարկել - պարտակել, թափթփված - խառնափնթոր, բուրյան - հոտավետ
- 3) շրջմոլիկ - թափառական, ընչացք - բեղ, բամբասանք - ասեկոսե, ընտրող - քվեարկող
- 4) ընձեռել - տրամադրել, մոմռալ - կսկծալ, արտասվել - հեկեկալ, աղամանդ - շողակն

4. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:

- 1) խոչընդոտել - նպաստել, ստերջ - անջրդի, հուսահատվել - գոտեպնդվել
- 2) շաղակրատ - քշախոս, գժոված - համերաշխ, կայտառ - շենշող
- 3) աղտեղություն - մաքրություն, սեղմ - ճապաղ, հեղհեղուկ - անհողողող
- 4) կշտամբել - գանահարել, իրազել - անտեղյակ, բացասում - հաստատում

5. Ո՞ր տարբերակում է համանուն բառերից մեկը սխալ բացատրված:

- 1) հորդ – տեղատարափ, հորդ – քո հոր
- 2) մատյան – գիրք, մատյան (գունդ) – հեծելագոր
- 3) մեկնել – մեկնաբանել, մեկնել – կարկամել
- 4) կողակից – ամուսին, կողակից – կողակ ձկից

6. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ բարդ:

- 1) անվանացանկ, զորահավաք, հովասուն, քննախույզ
- 2) նրբաքիմք, ռամկավար, առատածեռն, կատվառյուծ
- 3) ամրոցամերձ, շողարձակ, կրափոշի, կարգազանց
- 4) ուղղաթիռ, վիրակապ, ավարառու, էջանիշ

7. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում -ներ վերջավորությամբ:

- 1) երկնաքեր, սևամորթ, նետաձիգ, քարտաշ
- 2) հայագետ, գործագուրկ, մարդասեր, ծաղկաթերթ
- 3) սերմնացան, զորամաս, անասնապահ, հրձիգ
- 4) չափահաս, վառելանյութ, ծխամորճ, ձրիակեր

8. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում ու հոլովման:

- 1) կիրակի, ամուսին, աղախին, բարդի
- 2) պատանի, որդի, պապ, գարի
- 3) անկողին, գինի, լուցկի, վագել
- 4) այգի, երեխա, օղի, կաղին

9. Ըղձական եղանակի քանի՞ բայածև կա տրված հատվածում:

Իմ գերեզմանին դուք չմոտենաք,
Թողե՛ք, որ հանգչի իմ սիրտը հոգնած,
Թողե՛ք, որ լինեմ հեռավոր, մենակ,
Չգգամ, որ կա սեր, և՛ ցնորք, և՛ լաց...

- 1) վեց
- 2) երկու
- 3) չորս
- 4) հինգ

10. Ո՞ր նախադասության մեջ կապ չկա:

- 1) Նա, ըստ այդ որոշման, պետք է հանդիպեր նրան որևէ չեզոք տեղում և հասցներ ազարակ:
- 2) Բայց սովորաբար նա ինձ մոտ է գիշերում. այս երեկո եթե վաղ գա, հենց այս գիշերվա գնացքով կճանապարհեմ:
- 3) Չիմացա՝ ինչպես ճաշեցի, որովհետև ինձ շատ էր հետաքրքրում այն տեսակ–ցությունը, որ պիտի ունենայի Սառայի հետ:
- 4) Նա իսկույն բաժանվեց ինձնից այնքան ուրախ ու հանգստացած, որ կարծես այլևս ոչ մի դժբախտություն չէր անհանգստացնում իրեն:

11. Ո՞ր նախադասության մեջ չեզոք սեռի բայ չկա:

- 1) Նա փախավ մի քսան քայլ հեռու, կուչ եկավ մի ծառի տակ և գիրքը թևի տակ առավ:
- 2) Զարմացած նայեցի նրա դեմքին. այդ դեմքն արտահայտում էր միաժամանակ և՛ զայրույթ, և՛ պաղատանք:
- 3) Ուղեկցուհիս շատ էր տխրել և այլևս բոլորովին չէր խոսում:
- 4) Եվ ես, որ երբեք չեմ իմացել սենտիմենտալություն, ուզեցի հրացանս առնել և հենցնրա աչքի առջև փշրել այն:

12. Ո՞րը անդեմ նախադասությունն է:

- 1) Երկրաշարժից փլատակված քաղաք. անմեղ գոհեր:
- 2) Նորից անձրևում է տխուր, միապաղաղ:
- 3) - Ողջո՞ւյն քեզ, պայքա՛ր, կյա՛նք ու տառապա՛նք:
- 4) Չսիրել, չտենչալ, չկանչել ...

13. Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:

- 1) Նա վայր դրեց երեխային և հյուրերի հետ դուրս եկավ՝ վանքի բաժինները տեսնելու:
- 2) Ժողովուրդը հեքիաթների մեջ է արտահայտում իր իղձերը:
- 3) Շատ մի՛ խորացիր անորոշության լաբիրինթոսում:
- 4) Ազատ ժամանակ նրա հիմնական զբաղմունքը ընթերցելն է:

14. Ո՞ր շարքում թվականն չկա:

- 1) հնգապատիկ, քսաներորդ, երեք, միակ
- 2) բյուր, չորս, բազում, ոչ մի
- 3) շատ, եռակի, առաջնային, միավոր
- 4) բազմիցս, քառակուսի, որերորդ, տասնմեկ

15. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:

- 1) Այդ մարդաշատ քաղաքում ես ոչ միայն ծանոթացա իմ կյանքի ընկերոջ հետ, այլև հաղորդակից եղա նրա դարավոր մշակույթին:
- 2) Դանդաղ մոտեցավ խմբին և սկսեց խոսել Աստծուց ու աստվածայինից:
- 3) Ես երախտապարտ եմ Չեզնից այդպիսի օգնության համար:
- 4) Լուսնի խավարումը համընկավ այդ ահեղ ճակատամարտի սկսվելուն:

16. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Մի օր նա Շիրվանգադեին ասաց, որ այդ տղերքը շատ են դեսուդեն վագում, բայց ինքը չի կարծում, թե նրանք կարողանան որևէ լուրջ գործ սկսել:

1) Մի օր նա Շիրվանգադեին ասաց.

- Այդ տղերքը շատ են դեսուդեն վագում, բայց ես չեմ կարծում, թե նրանք կարողանան որևէ լուրջ գործ սկսել:

2) Մի օր նա Շիրվանգադեին ասաց.

- Այդ տղերքը շատ են դեսուդեն վագում, բայց ինքը չի կարծում, թե նրանք կարողանան որևէ լուրջ գործ սկսել:

3) Մի օր նա Շիրվանգադեին ասաց.

- Այդ տղերքը շատ են դեսուդեն վագում, բայց դու չես կարծում, թե նրանք

կարողանան որևէ լուրջ գործ սկսել:

4) Մի օր նա Շիրվանզադեին ասաց.

- Այդ տղերքը շատ են դեսուդեն վագում, բայց ես չեմ կարծում, թե նրանք կարող են որևէ լուրջ գործ սկսել:

17. Ո՞ր նախադասության մեջ միջակետ չափտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

1) Վարդանի հիշողությունը չխաբեց նրան գյուղը պետք է այնտեղ լինեի որտեղից նշմարվում էին լույսի նշույլներ:

2) Սենյակի մեջտեղում կանգնել էր ուրիշ մարդ նրա աչքը ծաղկամանի վրա չէր ոչ էլ միտքը ծաղկած ծիրանենիների փողոցում:

3) Այդ գովելի պատմությունը տպագրվեց ցանկալի է որ այդպիսիք և դրա նմանները շատանային և ընդօրինակվեին հայ ազգի մեջ:

4) Վարդանը մեկիկ-մեկիկ հիշում էր այդ ամենը կանանց հյուրասիրությունը գեղջուկների պարզ գրույցը գիշերային աստղալի երկինքը:

18. Ո՞ր տարբերակում փոխաբերություն չկա:

1) Եվ մահամերձն ալ կ'ուզե երկու բան,

Նախ՝ կյանքը, վերջը՝ լացող մ'իբ վըրան:

2) Չյունն էլ արևի ջահել համբույրից

Ուրախ լալիս է դաշտերի վրա:

3) Սարի հետևում շողերը մեռան.

Անուշ դաշտերը պատեց կապույտ մեզ:

4) Ջրերն են անվերջ միգում հեկեկում,

Իմ սիրտն է լալիս կարոտով անհուն:

19. Տրված բառերիցորում է գրվում –ն:

1) ա-պաճույճ,

2) ա-բիոն

3) ա-բարտավան

4) ա-բարտակ

20. Ո՞ր բառը ներքին հոլովման չի պատկանում :

1) գինետուն

2) վերնատուն

3) փառատոն

4) կնքահայր

21. Ո՞ր շարքում *առ*- նախածանց չկա:

- 1) առաջին
- 2) առկախ
- 3) առնետորս
- 4) առինքնում

22. Ո՞ր բառում մեկից ավելի հնչյունափոխություն կա.

- 1) գարեջրատուն
- 2) ծխամոլ
- 3) նրբահյուս
- 4) ջրվեժ:

23. Նշել այն դարձվածքի համարը, որի իմաստը սխալ է բացատրված.

- 1) դուռը ցույց տալ – վռնդել,
- 2) դափնիների վրա հանգստանալ – այլևս չառաջադիմել,
- 3) ծուխը քամուն տալ – օջախ վառել,
- 4) գլխին տալ – ճնշել,

24. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածականներ:

1. լեզվանի, հովանի, պիտանի
2. ապառիկ, տակառիկ, անառիկ
3. աշխարհիկ, բացառիկ, պատառիկ
4. հպանցիկ, միջանցիկ, տարանցիկ

25. Նշել նախադասության ճևաբանական վերլուծության սխալ տարբերակը:

Հասկանալի էր, որ մման պայմաններում ինձ տրված չէր հանգիստ հոգով զբաղվել իմ գործով. զգում էի, որ իմ նյարդերը սկսում էին բողոքել, բացի դրանից, օրիորդը աստիճանաբար անտանելի էր դառնում ինձ համար:

1. զգում էի – դիմավոր բայ, սահմանական եղանակ, բացի – կապ, երկդրություն
2. աստիճանաբար – վերաբերական, համար – կապ, հետադրություն
3. դառնում էր – անկանոն բայ, անկատար անցյալ, որ – ստորադասական շաղկապ
4. զբաղվել – անորոշ դերբայ, չեզոք սեռ, գործով – գոյական, գործիական հոլով_____

26. Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում անջատ.

- 1) աջ (ու) ահյակ, կուժ (կոտրուկ), սարն (ի) վեր, ձեռք (ձեռքի)
- 2) գնալ (հասնել), բոպե (առ) բոպե, առոք (փառոք), ալ (կարմիր)
- 3) դեմ (հանդիման), տարուց (տարի), ի (դեպ), Սանկտ (Պետերբուրգ)
- 4) հանել (բերել), ոտք (ոտքի), կրակ (ու) բոց, ծափ (ողջույն)

27. Ո՞ր շարքում մեծատառի գրության սխալ կա.

- 1) Մշո Առաքելոց վանք, Սուրբ Գևորգ եկեղեցի, Սյունյաց անտառ, Մար Աբաս Կատինա
- 2) Փոքր Ասիա, Օսմանյան կայսրություն, Վերին Շեն, Շիրակի մարզ
- 3) Վինսենթ Վան Գոգ, Վերին Դ-վին, Սուրբ Դավաթ կղզի, Ազգային ժողով
- 4) Մարոկկոյի Թագավորություն, Հարյուրամյա պատերազմ, Հայաստանի հանրապետական կուսակցություն, Հարուն ալ Ռաշիդ

28. Ո՞ր շարքի բոլոր բառերում կամ բառաձևերում է ձայնավորը հնչյունափոխվել բաղաձայնի.

- 1) բարություն, լվի, առվեզր, կկվականչ
- 2) վայրկենասալաք, հոգյակ, ձվածեղ, չվացուցակ
- 3) կղզեբնակ, լեզվանի, կատվածագ, թթվահամ
- 4) աղվամագ, ալյակ, ուրվական, մեղվապահ

29. Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը կամ բառաձևերը համանուններ չեն:

- 1) գրքի երես – երես առնել
- 2) երամակից թռչուն – ձիերի երամակից
- 3) դատել հանցագործին – դառը դատել
- 4) քզի չիր – մի քզի չափ հող

30. Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն չկա.

- 1) ոտքը կապել – արգելք լինել, ջուր ծեծել – սուտ լուրեր տարածել
- 2) իրար օձիք բաց չթողնել – իրար կպչել, ձայն ձայնի տալ – քվեն տալ ինչ-որ մեկին
- 3) գլուխը խառը լինել – որևէ գործով խիստ զբաղված լինել, ծովային գայլ – ծովային գործին շատ հմուտ
- 4) աչքը բաց – ճարպիկ, երես չունենալ – կեղծել

31. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ չկա:

- 1) Թեև մրցակիցը ուժեղ էր, բայց իր համառության պատճառով մարզիկը կարողացավ հաղթել նրան:
- 2) Գիտնականների՝ տիեզերքի ուսումնասիրությանն ուղղված ջանքերը զերծ են շահադիտական ամեն տեսակի նպատակներից:
- 3) Ժողովուրդը փառաբանում էր ռազմական օդաչուի անօրինական սխրանքը:
- 4) Մեծ իմաստասերը գրեց, թե տկարամիտ են այն գլուխները, որոնց թույլ կարծիքով Երկիրը լեռներից է շինված. լեռներից միայն Հայքն է շինված:

32. Տրված բառերից քանի՞սն են հապավումներ.

խնայբանկ, արտգործնախարար, տեխնոնում, կազմբաժին, պետառևտուր, պատքարտուղար, հեռատեսիլ, ֆիննախ, աշխարհասփյուռ, մանկխորի:

- 1) յոթը
- 2) բոլորը
- 3) ինը
- 4) ութը

33. Ո՞ր նախադասության մեջ դիմորդը հողի գործածություն կա:

- 1) Աչքերիդ փայլից երևում է, որ նպատակդ կատարվել է:
- 2) Հրաշալի վարդերը ձեռքներիս՝ անհամբեր սպասում էինք օդանավի վայրէջքին:
- 3) Սեպտեմբերի քսանմեկին հայերս մեծ շուքով տոնեցինք Հայաստանի անկախության պանծալի քսանամյակը:
- 4) Մռայլ խորհրդածությունները թույլ չտվեցին գիշերս աչք փակել:

34. Ո՞ր շարքի բոլոր ժամանակաձևերն են պարզ դիմավոր ձևեր:

- 1) չեմ գնա, հարգի՛ր, վեր կենայի, պարապեիմք
- 2) պիտի վեր կենաս, մի՛ մոռացիր, լաց մի՛ լինիր, կերանք-խմեցինք
- 3) մի՛ գնա, չի կորել, նե՛րս եկ, ձեռք տվեց
- 4) պիտի դուրս գամ, ուտում-խմում են, վե՛ր կաց, թույլ կտամ

35. Ո՞ր նախադասության մեջ դերանուն չկա:

- 1) Անտոնը կրակեց. մխի մեջ տեսա, թե ինչպես աղվեսը գլորվեց:
- 2) Չյունը դեռ չէր հալվել, բայց արևի ջերմությունից արդեն զգացվում էր, որ գարունը բոլորովին էլ հեռու չէ:
- 3) Մի քանի տեղ աղվեսը ուժասպառ ընկել էր, արյունն ավելի շատ էր հոսել, և ձյունի վրա թափվել էին մորթու մազերը:
- 4) Կրակոցից ծառի ճյուղերից ձյուն թափվեց, բայց վառողը չխանձեց ոչ մի աղվեսի մորթի:

36. Ո՞ր շարքի բոլոր վերաբերականներն են հաստատական:

- 1) հիրավի, ինչ խոսք, մինչև անգամ, նույնիսկ
- 2) իրավ, անխոս, իսկապես, անտարակույս
- 3) անշուշտ, այնուամենայնիվ, հարկավ, արդարև
- 4) ահավասիկ, իսկևիսկ, անպատճառ, մանավանդ

37. Ո՞ր տարբերակում պարագա չկա:

- 1) Օրը գնաց հավասարվեց
Հազար տարվա մեռելներին:
- 2) Ես սիրում եմ նստել ամեն իրիկուն
Պատուհանիս առաջ երկար ժամեր...

3) Ինչո՞ւ ապշած են, լճա՛կ,

Ու չեն խայտար քո ալյակք:

4) Եվ ծլվլաց աշխարհով մեկ

Լույսը առավոտի:

38. Նշված հատկանիշները բանաստեղծական ո՞ր տեսակին են բնորոշ:

Ութտողանի բանաստեղծություն է, որի առաջին տողը նույնությամբ կրկնվում է որպես չորրորդ և յոթերորդատող, իսկ երկրորդ տողը՝ որպես տերցիոն:

1) տրիոլետ

2) հայրեն

3) սոնետ

4) գազել

39. Ո՞ր բառի բացատրությունն է սխալ.

1) հոմանի – սիրելեկան ,

2) աճապարել – շտապել,

3) առաքել – քայլել,

4) քողտիկ – հյուղակ,

40. Միայն արևմտահայերենին բնորոշ քանի՞ բառաձև կա տրված հատվածում:

Զմրուխտներով կը ծփա դաշտը անհուն:

Ծիտը կ'երգե թառած հասկի մ' օրորուն,

Մինչ իր տակեն ցորյաններու մոլեգին

Ծովեր կանցցին...

1) 3

2) 4

3) 5

4) 6

41. Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում անջատ:

1) առ(այն), Սան(Մարինո), դուրս(բերել), դեմ(հանդիման)

2) կաս(կարմիր), ամեն(մի), ծայրից(ծայր), այսօր(ևեթ)

3) մեջք(մեջքի), ի(բարօրություն), քար(կոծել), դիցուք(թե)

4) հարյուր(վեց), հինգ(հարյուրանոց), թեր(և)դեմ, չորս(հինգերորդ)

42. Ո՞ր շարքի բոլոր բառերում է(են) ձայնավորի հնչյունափոխություն կա:

1) շինական, նշաձև, հանդիսատես, տիրուհի

2) մտնել, միգանուշ, կիսանդրի, գիտակցաբար

- 3) իշայծյամ, գնացուցակ, գիսավոր, շիկակարմիր
- 4) իջևանատուն, կիզանուտ, գիշակեր, իգական

43. Ո՞ր շարքի բառերի և բառաձևերի բոլոր վանկերն են բաց:

- 1) ուրախանայի, նյարդային, հեռանալու, երեկոյի
- 2) հնամենի, ենթակա, առաքինի, բացովի
- 3) հերոսավեպի, կատու, վարդապետի, գինի
- 4) համատեղելի, լուսաբացի, հեղեղելու, պատանի

44. Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:

- 1) անիմաստ, անմիտ, անկաշկանդ, անհեթեթ
- 2) դրվատել, կշտամբել, պախարակել, դատափետել
- 3) համայն, ամենայն, ամբողջ, բովանդակ
- 4) աստանդական, ասպնջական, հյուրընկալ, վանատուր

45. Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն կա:

- 1) աղանդ – տվյալ եկեղեցու դավանանքից շեղվող ուսմունք, արոր – հող հերկելու գործիք
- 2) պաքսիմատ – չորացրած հաց, օշարակ – մրգահյութի զովացուցիչ ըմպելիք
- 3) դերվիշ – մահմեդականների թափառական կրոնավոր, անմեկին – անբացատրելի, անլուծելի բան
- 4) աղորիք – հացահատիկ աղալու մեքենա, նյութել – որևէ դավանության հետևել

46. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության կամ բառի կազմության սխալ կա:

- 1) Շախմատային մրցաշարն ավարտվեց հօգուտ հայ շախմատիստների:
- 2) Երբեմն այնքան ուժգին էր ձգում սանձը, որ ձին գիրք կանգ էր առնում:
- 3) Մենք ցանկանում ենք, որ ձեռնարկության սննկացումը դաս լինի մյուսներին:
- 4) Աղջկան տեսնում էր թե չէ, միանգամից անակնկալի էր գալիս:

47. Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բոլոր այն գոյականների համարները, որոնց հոգնակին կազմվում է -եր վերջավորությամբ.

- 1. դրամահատ, 2. ստուգայց, 3. նիզակակիր, 4. հակաթույն, 5. ջրաշիթ, 6. ազնվայր, 7. պատշար, 8. աստղագետ, 9. ատամնաշար:
- 1) 1, 3, 5, 6, 8
- 2) 2, 3, 6, 7, 8
- 3) 2, 4, 5, 6, 9
- 4) 1, 2, 4, 5, 7, 9

48. Ո՞ր տարբերակում հարկադրական եղանակի բայածն չկա:

1) Պիտի կրկին դասը սերտեն իրենց սիրո՝

Ըստ աստղային այբուբենի:

2) Եվ պե՞տք է արդյոք

Քեզ միշտ ունենալ իմ կողքին:

3) Նա պիտի մեր առաջին

Ու վերջին սերը լինի:

4) Տարիներ հետո նա պիտի դառնա

Մի ժողովրդի ազնիվ կենսագիր...

49. Ո՞ր տարբերակում մակբայ չկա:

1) Այնտեղ՝ կապուտակ ջրերի ծոցում, իր խաղաղ օրերն էր անցկացնում էն քաջն անվեհեր:

2) Երազ աշխարհում Ամեն բան հավետ

Գալիս է, գնում Ու ցնդում անհետ:

3) Մենք դիտմամբ փորձում էինք ջղայնացնել նրանց, սակայն չէր հաջողվում:

4) Մեր վարպետներն են հնուց տուֆ սիրել և այն վերածել նախշազարդ քարի:

50. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում ան հոլովման:

1) ընդմիջում, օձաձուկ, ծունկ, ձմեռ

2) աշուն, շարժում, լեռ, խիզախություն

3) նախադուռ, գումարում, արյուն, մուռ

4) դերանուն, ամառ, շարժում, օրոր

51. Ո՞ր բարդ նախադասության կազմում միակազմ նախադասություն կա:

1) Մթնում էր, երբ մենք հասանք լեռան ձյունապատ գագաթին:

2) Եկել էր ինձ մոտ, որ գործի մանրամասները քննարկենք:

3) Խոսելը նրա սիրած զբաղմունքն է, բայց շատ է այն չարաշահում:

4) Ոչ ոք չկար. լսվում էր միայն մեղունների բզզոցը:

52. Տրված նախադասություններից որո՞ւմ բաղադրյալ ստորոգյալ չկա:

1) Մոտ էր այն օրը, երբ գործերս ավարտին պիտի հասցնեի:

2) Բաճկոնս փոքր-ինչ մեծ էր, ու ես նեղվում էի:

3) Երկու ժամ այդպես քարացել էի՝ ճոճաթռռի մեջ կծկված:

4) Հենց սա է այն տղան, որ այդքան աղմուկ է հանել:

53. Ո՞ր նախադասության մեջ է որոշիչն արտահայտված դերանունով:

1) Այդպես անցան շատ տարիներ:

2) Տեսավ, որ ձիավորների խումբն իրենց է մոտենում:

3) Քաղաքը, ուր անցավ իմ մանկությունը, քարտեզների վրայից չի անհետացել:

4) Նրա ծննդյան տարեդարձին մասնակցում էին բոլոր ընկերները:

54. Ո՞ր նախադասության մեջ կոչական կա (նախադասությունները կետադրված չեն):

1) Եղկելի մարդկանց վատ գործերը փոշի կդառնան...

2) Այո ես պատրաստ եմ կրելու իմ ճակատագիրը:

3) Դուք որոշեք ձեր անելիքը:

4) Բարի լույս լսում է պարոն Գևորգը հարևան քո այգուց ինչ կա ինչ չկա:

55. Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված պարզի:

1) Նա հետևում էր, թե ինչպես է աղջիկը շշերը դասավորում սփռոցի վրա:

Նա հետևում էր շշերը սփռոցի վրա դասավորող աղջկան:

2) Եթե մի քիչ ավելի հեռու լիներ, նրա շարժումները չէին երևա:

Մի քիչ ավելի հեռու լինելով՝ նրա շարժումները չէին երևա:

3) Եթե հեռանալը հեշտ լիներ, Գրիգորյանը վաղուց հեռացած կլիներ գյուղից:

Գյուղից հեռանալը հեշտ լիներու դեպքում Գրիգորյանը վաղուց հեռացած կլիներ:

4) Ինչ որ իրեն պետք էր լինում, նա այդպես կատակով վերցնում էր:

Իրեն պետք եղածը նա այդպես կատակով վերցնում էր:

56. Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

1) Չորի բերանին կտրուկ գառիթափի տակ էր կանգնած եղբայրը գայլի համար լարված թակարդը ձեռքին:

2) Հերթապահ կնոջ մի կարճ հայացքից ես հասկացա ինչ է մտածում նա մեր մասին:

3) Աղջիկը փրկել է նկարը և բավական երկար ժամանակով հեղինակի ընտանիքը նյութական մեղ կացությունից հանել:

4) Նա միլիոնատիրոջ որդի էր ուժեղ երկրի ներկայացուցիչ:

57. Նախադասություններից ո՞րն է համառոտ:

1) Իսկ ժողովուրդը տեղից տեղ է թափառում:

2) Ճարտարապետին կանչե՞մ, հայրի՛կ:

3) Անշուշտ, տարակուսանքները գլուխ էին բարձրացրել:

4) Բաջերի սահմանը իրենց զենքն է: _____

58. Նշված անձնանուններից ո՞րը չի կարող գործածվել որպես հասարակ անուն:

1) Գոհար

2) Հարություն

3) Նաիրի

4) Համբարձում

59. Նշել այն բառի համարը, որում հնչյունափոխություն չկա.

1. զինավարժանք,

2. ձեղնահարկ,

3. մատուցարան

4. ստորև

60. Նշել այն շարքի համարը, որի բոլոր բառերը դերանուններ են:

1. ոչինչ, ոչ ոք, ոչ, ոչ մի

2. ինքներս, այնքան, ոմանք, ինչպես

3. քանի, քանիերորդ, քանի որ, մի քանի

4. նույնչափ, ինչ-որ, ինչպիսի, նախքան

61. «Սասնա ծռեր» էպոսի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

1) Դավիթը ամուսնանում է Չմշկիկ Սուլթանի հետ, իսկ հետո, Ձենով Հովանից իմանալով Խանդութի գեղեցկության մասին, գնում է նրա մոտ և բազմաթիվ սխրագործություններ կատարելով՝ ամուսնանում վերջինիս հետ:

2) Ծովիմարի խորհրդով իրենց կառուցած ամրոցը Սանասարն ու Բաղդասարը անվանում են Սասուն:

3) Մեծ Միերը գոտեմարտում է Սասունի հացի ճանապարհը կտրող հսկա առյուծի հետ և նրա երախը պատռելով՝ մեջտեղից կիսում:

4) Հոր անեծքով Փոքր Միերը մնում է անմահ ու անժառանգ, դները բռնում են նրան և փակում Ագռավաքարում:

62. Նշվածներից ո՞վ արևմտահայ գրող չէ.

1. Հակոբ Պարոնյան

2. Բաֆֆի

3. Գրիգոր Զոհրապ

4. Սիամանթո

63. Ո՞վ է գրել Մեսրոպ Մաշտոցի կենսագրությունը.

1. Եզնիկ Կողբացի

2. Կորյուն

3. Ագաթանգեղոս

4. Եղիշե

64. Ե. Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

...Եվ հավատացիմք, հարբած ու գինով,
Որ դու կաս՝ հզոր, մարմնացում Ուժի –
Իսկ նրանք եկան՝ արյունով, հրով
Մեր երկիրը հին դարձրին փոշի...

- 1) «Անվերնագիր»
- 2) «Մահվան տեսիլ»
- 3) «Վահագն»
- 4) «Հեռացումի խոսքեր»

65. Գրական ո՞ր ուղղության ներկայացուցիչն է Շիրվանզադեն:

- 1) ռեալիզմի
- 2) սիմվոլիզմի
- 3) կլասիցիզմի
- 4) ռոմանտիզմի

66. Ո՞վ է գրել «Ցեղին սիրտը» բանաստեղծական ժողովածուն.

1. Միսաք Մեծարենց
2. Գրիգոր Զոհրապ
3. Լևոն Շանթ
4. Դանիել Վարուժան

67. Հ. Թումանյանի «Անուշ» պոեմում ո՞վ է Անուշին խորհուրդ տալիս.

Թե լալիս ես՝ վարդ ես ուզում՝

Մայիս կգա, մի քիչ կաց,

Թե լալիս ես՝ յարդ ես ուզում,

Ա՛խ, նագնաց, նագնա՛ց

- 1) ընկերուհին
- 2) Անուշի մայրը
- 3) ծերունին
- 4) անցվոր ախպերը

68. «Սասունցի Դավիթ» էպոսում ինչո՞ւ է Դավթի ձեռքի Խաչ պատերազմին սևանում:

- 1) Երդվել էր մարտի ելնել Պղնձե քաղաքի թագավորի թշնամիների դեմ և ազատել նրան հարկից, բայց խոստումը դրժել էր:
- 2) Խոստացել էր փահլևաններին ամուսնացնելուց հետո շտապ դառնալ Խանդութի ու զավակի մոտ և ուշացել էր:

3) Երդվել էր յոթ օրից վերադառնալ Չմշկիկ Սուլթանի մոտ, որ կռվեն, և մոռացության էր տվել:

4) Հովիվներին խոստացել էր վանքից հարիսա բերել, բայց 40 ավազակների դեմ կռվի մեջ մտնելով՝ մոռացել էր:

69. Պետրոս Դուրյանի «Իմ ցավը» բանաստեղծության տողերի ո՞ր հերթականությունն է ճիշտ արտահայտում այդ տողերի հաջորդականությունը:

1. Գրկե՛լ սա ցուրտ հողակույտը
2. Դեռ չը գրկած էակ – փունջ մը
3. Ժըպտե, գեղե, հուրե շաղյալ
4. Ո՛հ չէ՛ այնչափ ցավ ինձ համար

1) 1, 2, 3, 4

2) 2, 3, 4, 1

3) 2, 3, 1, 4

4) 3, 2, 1, 4

70. Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:

ա. Հույսը հատավ... Ու լաց եղավ

բ. Տխուր աղջիկն արքայի

գ. Որ լիճ կապեց արտասուքը

դ. Ծածկեց քաղաքն ու ամրոց

ե. Ճամփաներին ամայի

զ. Նայե՛ց, նայե՛ց սարերն ի վեր

է. Էսպես անցան շատ տարիներ

ը. Էնքա՛ն արավ լաց ու կոծ

1) ա, բ, գ, է, ը, դ, զ, ե

2) ա, գ, բ, գ, դ, է, ը, ե

3) է, գ, բ, ա, ե, ը, գ, դ

4) է, բ, գ, ե, ա, ը, գ, դ

71. Ո՞ր շարքում Գրիգոր Ջոհրասյի «Այինկա» նորավեպի հերոսներից չկա:

1) Հակոբոս, Տիգրանուհի, Վասիլիկ

2) Սահակ, Ջարդար, Սրաֆիոն Գասպարիչ

3) Պերճուհի, Մարտիրոս, Սմբատ

4) Հուսեփ աղա, Սուրբիկ հանըմ, Հաճի Տյուրիկ

72. Ո՞ր հատվածն է Պարույր Սևակի «Վարք մեծաց» բանաստեղծությունից:

1) Նա օտար հրի ճարակի դիմաց

Մեր ինքնությունը կոփեց ու կռեց...

2) Նրանք ծնվում են իրենց ծնողի անօգնությունից,

Որպեսզի դառնան նոր գործողություն:

3) Դու, որ սայթաքել ու վայր ես ընկել,

Ընկել ես, սակայն երբեք չես ծնկել...

4) Սերում են նրանք և այն ծերունից,

Որ նախընտրում էր ապրել տակառում:

73. Ինչո՞վ է ավարտվում Ակսել Բակունցի «Խոնարհ աղջիկը» պատմվածքը:

1) Խոնարհը մերժում է ուսուցչի սերը և ամուսնանում ուրիշի հետ:

2) Տարիներ անց Խոնարհը փնտրում և գտնում է իրենց գյուղի նախկին ուսուցչին:

3) Մեկ տարով գյուղ՝ ուսուցչության մեկնած երիտասարդը վերադառնում է՝ անավարտ թողնելով սկիզբ առած սիրո պատմությունը:

4) Տասներկու տարի անց գործնական այցով կրկին գյուղ եկած հերոսը հանդիպում է Խոնարհին, որին ճանաչում է միայն աչքերից:

74. «Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) վերաբերյալ ո՞ր պնդման մեջ սխալ չկա:

1) Բերդի կառուցման ժամանակ Սանասարը շինարարությամբ է զբաղվում, իսկ Բաղդասարը միայն որս է անում:

2) Մեծ Սհերը մենամարտում սպանում է Մըսրա Մելիքին և տիրում Բաղդադին:

3) Ամենահաղթ Դավիթը սպանվում է Չմշկիկ Սուլթանի թունավոր նետից:

4) Փոքր Սհերը Սասունցի Դավթի որդին է:

դարձնել Սասունը:

75. Ա. Բակունցի «Միրհավ» պատմվածքի վերաբերյալ ո՞ր պնդումը ճիշտ չէ:

1) Սոնայի ամուսնությունից հետո Դիլանը ինքնասպան է լինում:

2) Դիլանը և Սոնան մանկության ընկերներ էին, և նրանց սերը ծնվել էր աննկատ:

3) Սոնան ամուսնությունից մեկ տարի հետո մահանում է:

4) Դիլան դալին Սոնայի մահից հետո ամուսնանում է, բայց մինչև խոր ծերություն հիշում է Սոնային:

76. Ո՞վ է հայ նոր գրականության հիմնադիրը.

1. Սայաթ-Նովա

2. Խաչատուր Աբովյան

3. Եղիշե Չարենց

4. Միքայել Նալբանդյան

77. Ո՞ր դարի բանաստեղծ է Նահապետ Քուչակը.

1. 11-րդ դար
2. 7-րդ դար
3. 16-րդ դար
4. 18-րդ դար

78. Հ. Թումանյանի «Անուշ» պոեմի ո՞ր հերոսն է պոեմի դրվագներից մեկում նկարագրվում հետևյալ կերպ.

Դեմքը այլալված, քայլվածքը մոլոր.

Սարսափ է կաթում արնոտ աչքերից,

Եվ կերպարանքը փոխված է բոլոր:

- 1) Սարոն
- 2) ծերունին
- 3) Մոսիս
- 4) Անուշը

79. Ո՞ր տողը Մ. Մեծարենցի «Միրերգ» («Գիշերն անուշ է, գիշերն հեշտագի՜ն»)
բանաստեղծությունից չէ:

- 1) Համբույրիդ, գիշե՛ր, պատուհանս է բաց
- 2) Բայց լույսն իմ հոգվույս քիչ-քիչ կը մաշի՛
- 3) Համբույրներ կու գան հովեն ու ծովեն
- 4) Լուսեղեն ճամփեն ես կանցնիմ գինով

80. Ավ. Իսահակյանի ո՞ր ստեղծագործությունն է ավարտվում հետևյալ տողով.

«Ծնվում ենք ակամա, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարոտով...»:

- 1) «Համբերանքի չիբուխը»
- 2) «Լիլիթ»
- 3) «Սաադիի վերջին գարունը»
- 4) «Հավերժական սերը»